ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» ապրիլի 2021թ. № 179

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Չարենցի փողոցի վրա գտնվող 06-006-1818-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,002 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման (փողոց, հրապարակ) գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Չարենցի փողոց, թիվ 153» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» ապրիլի 2021թ. N 180

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 17/1» ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՈՐԻԿ ՍՊԱՐՏԱԿԻ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 243 ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Նորիկ Սպարտակի Խաչիկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի «Իտալական թաղամաս, թիվ 17/1» հասցեի տնակը ժամանակավոր բնակության համար հատկացնել Նորիկ Սպարտակի Խաչիկյանին:

2. Նորիկ Սպարտակի Խաչիկյանին՝

1) Ընդունել ի գիտություն, որ հատկացումից հետո վեց ամիս տնակը չբնակեցնելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Տնակի շահագործման կանոնների պահպանման, նպատակային նշանակությամբ օգտագործման հսկողությունը հանձնարարել «Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սպարտակ Ափուջանյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Սպիտակի քաղաքապետի 2014 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 243 որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» ապրիլի 2021թ. № 181

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿ ԼԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 63-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հայկ Լամբարյանի 2021 թվականի ապրիլի 1-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Հայկ Լամբարյանին (ՀՎՀՀ 66005799) տալ «ք. Սպիտակ, Վանաձորյան խճղ.» հասցեում գտնվող ավտոպահեստամասերի խանութում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» ապրիլի 2021թ. № 182

ԱՀԱՐՈՆ ԱԶԳԵՐՏԻ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 13-ի թիվ 22 որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի ապրիլի 10-ի թիվ 44 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 18 օրդերը, «Գ.Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Ահարոն Ազգերտի Շահմուրադյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30032021-06-0043 վկայական՝ տրված 2021 թվականի մարտի 30-ին) «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան հրապարակ 12 շենք» հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի 3-րդ հարկում գտնվող 72,25 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով երկու սենյականոց բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Ահարոն Ազգերտի Շահմուրադյանի ընտանիքին որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Ահարոն Ազգերտի Շահմուրադյան- ինքը՝ ծնված 1981 թվականին,

2) Հերմինե Ազգերտի Շահմուրադյան - քույրը՝ ծնված 1976 թվականին,

3) Ելիզավետա Ստասիկի Նազարյան – մայրը՝ ծնված 1958 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս. Ավետիսյան հրապարակ, 12 շենք, բն. 6» հասցեն:

4. Հանձնարարել՝

1) աշխատակազմի գլխավոր մասնագետ Միշա Թամամյանին ապահովել սույն որոշման կատարումը:

2) աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» ապրիլի 2021թ. № 183

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0038-0039 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,88 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,40445 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգի 7-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի տարածքում գտնվող 06-006-0038-0039 կադաստրային ծածկագրով 0,88 հեկտար մակերեսով հողամասից առանձնացված գյուղատնտեսական նշանակության 0,40455 հեկտար մակերեսով այլ հողատեսքի հողամասը փոխադրել 3-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշմամբ կատարված հողատեսքի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» ապրիլի 2021թ. № 184

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 179 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «3» ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 179 որոշմանը կից ցուցակում, որպես Սպիտակ համայնքի Առափնյա թաղամասում գտնվող 031-14 ծածկագրով հողամասի սեփականատեր, «Մանվել Սայադի Բոյախչյանի» փոխարեն գրվել է «Բոյախչյան Սայադ Երվանդի», հիմք ընդունելով Մանվել Սայադի Բոյախչյանի դիմումը, Ժաննա Սայադի Բոյախչյանի հայտարարությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի նոյեմբերի 25-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան և Առափնյա փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 179 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշմանը կից ցուցակի 222-րդ տողում նշված «Բոյախչյան Սայադ Երվանդի» բառերը փոխարինել «Բոյախչյան Մանվել Սայադի» բառերով:

2. Հաստատել Մանվել Սայադի Բոյախչյանին պատկանող՝ Սպիտակ համայնքի Առափնյա թաղամասում գտնվող 06-006-0031-0014 կադաստրային ծածկագրով 0,04603 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասին տրամադրել «ք. Սպիտակ, Առափնյա թաղամաս, թիվ 193» հասցեն:

4. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» ապրիլի 2021թ. № 185

‹‹ՍՊԻՏԱԿԻ ԿԱՍԿԱԴ›› ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2461297 վկայականը և ‹‹Սպիտակի կասկադ›› ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Լենվելի Դանիելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. ‹‹Սպիտակի կասկադ›› ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 0,15 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 251» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 8
ք.Սպիտակ